ՍԱՂՄՈՍ 98

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Իր արդարության համար ՏԻՐՈՋԸ փառաբանելու կոչ MT ներածություն Սաղմոս	ՏԻՐՈՋԸ փառաբանության երգ Իր փրկության և դատաստանի համար	Երկրի վրա Աստծո ապագա թագավորության հաստատումը հռչակող օրհներգ	Աստված աշխարհի իշխանը	Աշխարհի Դատավորը
98:1-3	98:1-3	98:1-3	98:1-3	98:1
				98:2-3բ
				98:3գ-4
98:4-6	98:4-6	98:4-6	98:4-6	
				98:5-6
98:7-9	98:7-9	98:7-9	98:7-9	98:-8
				98:9

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Տիեզերական տարրը, որն իսկապես շատ է աչքի ընկնում Սաղմոս 96 և 97-ում, շարունակվում է (այսինքն՝ Սաղմ. 98:3բ, 4ա, 7, 9ա,բ)
1. «հեթանոսների/ազգերի առջև», Սաղմ. 98:2
2. «երկրի բոլոր ծայրերը տեսան», Սաղմ. 98:3
3. «ամբողջ երկիրը», Սաղմ. 98:4
4. «ծովն ու նրա լիությունը», Սաղմ. 98:7
5. «աշխարհն ու նրա բնակիչները», Սաղմ. 98:7
6. «երկիրը դատելու», Սաղմ. 98:9

7. «աշխարհը դատելու», Սաղմ. 98:9
8. «ժողովուրդները», Սաղմ. 98:9

Խնդրում եմ կարդացե՛ք <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ</u>: Այն իմ աստվածաբանության ինտեգրացիոն կենտրոնն է:

Բ. ՅԱՀՎԵՆ գալիս է որպես Թագավոր (տես՝ Սաղմ. 97:1 ամբողջական գրառումը) և Դատավոր ամբողջ աշխարհի համար՝ հատկապես Իսրայելի: Նա գալիս է որպես Նահապետներին Խոստում տվողը (տես՝ Սաղմ. 98:3ա):

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ՏՐՎԱԾ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ</u>

Գ. Առաջին պարբերությունն ունի վեց ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ (ավարտված գործողություն), որոնք մանրամասնում են, թե ինչ է արել ՅԱՀՎԵՆ (կամ ինչ է անելու. ժամանակի տարրը եբրայերեն ԲԱՅԵՐՈՒՄ որոշվում է ըստ համատեքստի):
1. զարմանալի բաներ կատարեց, Սաղմ. 98:1
2. հաղթություն բերեցին, Սաղմ. 98:1
3. հայտնի դարձրեց Իր փրկությունը, Սաղմ. 98:2
4. Իր արդարությունը ցույց տվեց, Սաղմ. 98:2
5. հիշեց Իր ողորմությունն ու ճշմարտությունը, Սաղմ. 98:3
6. ամբողջ երկիրը տեսավ Նրա փրկությունը, Սաղմ. 98:3:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 98:1-3
[1]Նո՛ր երգ երգեցեք ՏԻՐՈՋԸ,
Քանի որ Նա զարմանալի բաներ կատարեց.
Իր աջ ձեռքն ու սուրբ բազուկը Իրեն հաղթություն բերեցին:
[2]ՏԵՐԸ հայտնի դարձրեց Իր փրկությունը,
Հեթանոսների առջև բացահայտորեն ցույց տվեց Իր արդարությունը:
[3]Հիշեց Իր ողորմությունն ու ճշմարտությունը Իսրայելի տան հանդեպ.
Երկրի բոլոր ծայրերը տեսան մեր Աստծո փրկությունը:

98:1 «Նո՛ր երգ երգեցեք ՏԻՐՈՋԸ» Սա *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Կարելի է տեսնել, թե ինչու են Սաղմոսաց գրքում Սաղմոս 95, 96 և 98 իրար այսքան մոտ շարադրված (այսինքն՝ Գիրք 4, Սաղմոս 90-106) խմբագրի (կամ խմբագիրների) կողմից:

«Նոր երգը» պատասխանն էր ուխտի ժողովրդի կողմից իրենց Աստծուց փրկության, ներման և զորության դրսևորման համար (տես՝ Սաղմ. 98:1բ, 33:3, 40:3, 96:1, 144:9, 149:1, Եսայի 42:10, Հայտն. 5:9, 14:3): ՅԱՀՎԵՆ գործում էր նրանց օգտին: Նա և միայն Նա՛ էր պատասխանատու (Սաղմ. 98:1գ): Սակայն, Սաղմ. 37:40 ցույց է տալիս, որ ՅԱՀՎԵԻ փրկությունը՝ ազատագրումը կապված է մարդկային հավատքի և հավատարմության հետ: Ուխտը (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ</u>) միավորում է ՅԱՀՎԵԻ ինքնիշխան նախաձեռնությունը և մարդկանցից սպասվող հնազանդությունը, հարատև արձագանքը:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ</u>

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ</u>

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ</u>

Ուշադրություն դարձրե՛ք այս Սաղմոսում գործածված ԲԱՅԵՐԻ քանակը, որոք վերաբերում են ձայներին՝

1. երգեցե՛ք, Սաղմ. 98:1 – BDB 1010, KB 1479

2. հայտնի դարձնել, Սաղմ. 98:2 – BDB 929, KB 1206
3. ցնծության աղմուկ բարձրացրեք, Սաղմ. 98:4 – BDB 929, KB 1206
4. ձայներ բարձրացրեք, Սաղմ. 98:4 – BDB 822, KB 953
5. հրճվեցեք, Սաղմ. 98:4 – BDB 943, KB 1247
6. փառաբանություններ երգեցեք, Սաղմ. 98:4 – BDB 274, KB 273
7. փառաբանություններ երգեցեք, Սաղմ. 98:5 – նույնը ինչ #6
8. ցնծությամբ աղաղակեցեք, Սաղմ. 98:6 – նույնը ինչ #3
9. գոռան ծովերը, Սաղմ. 98:7 – BDB 947, KB 1266
10. գետերը ծափ զարկեն, Սաղմ. 98:8 – BDB 561, KB 567
11. բլուրները ցնծան, Սաղմ. 98:8 – նույնը ինչ #5, սակայն *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅ-ՑԱԿԱՆ իմաստով

❖ **«զարմանալի բաներ»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՔԱՆՉԵԼԻ ԲԱՆԵՐ

❖ **«Նրա աջ ձեռքը»** Աստվածաբանորեն սա համազոր է Եսայի 52:10: Հաղթանակը Նրանն է և միայն Նրանը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ

❖ **«հաղթություն բերեցին»** Այս ԲԱՅԸ (BDB 446, KB 448, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ) նշանակում է «փրկել», «հաղթանակ բերել» (տես՝ Ես. 59:16, 63:5): Հաղթանակը (կախված համատեքստորեն նախատեսված ժամանակացույցից) հնարավոր է վերաբերում է՝

1. սկզբնական ստեղծագործությանը (այսինքն՝ ջրային քաոսի հանդեպ հաղթանակը. այսինքն՝ Սաղմ. 65:7, 89:9-10, 93:3-4)
2. ելքը՝ նվաճումը (տես՝ Եսայի 51:9-10, այսինքն՝ Կարմիր Ծովը և Հորդանան Գետը)
3. ազգերի աստվածներին (*էլոհիմներին*) հաղթելը (տես՝ Սաղմ. 2:1, 65:7-8)
4. գերությունից վերադարձը (տես՝ Եսայի 40-45)
5. չարի հանդեպ վերջնական հաղթանակը (այսինքն՝ Ծնն. 3:15, Մատթ. 1:21, Մարկ. 10:45, 2 Կորնթ. 5:21):

98:2 «ՏԵՐ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

❖ **«փրկություն»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)

❖ **«արդարություն»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

❖ **«հեթանոսների առջև»** Տես՝ Սաղմ. 46:10 և Եսայի 52:10: Ոչ միայն այն պատճառով, որ նրանք տեսնեն, այլ որպեսզի փոխվեն և փրկվեն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

98:3 «Իր ողորմությունն ու ճշմարտությունը/հավատարմությունը Իսրայելի տան հանդեպ» Սա վերաբերում է ՅԱՀՎԵԻ խոստումներին, որոնք տվել էր Նահապետներին՝ սկսած Աբրահամից (տես՝ Ծնն. 12:1-3, 15:1, 17:1-8, Սաղմ. 105:8-15,42, 106:45):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (*HESED*)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ

❖ **«երկրի բոլոր ծայրերը»** Տես՝ Համատեքստային Հասկացություններ, Ա.

NIDOTTE, էջ՝ 521, ներկայացնում է մի ցանկ, թե ինչպես է «երկրի ծայրերը» արտահայտությունը գործածվում՝

1. ՅԱՀՎԵԻ անունը և փառաբանությունը, Սաղմ.48:10, Եսայի 42:10
2. Աստծո վախը, Սաղմ.67:7
3. Աստծո թագավորության գիտությունը, Սաղմ.59:13
4. Աստծո փրկությունը, Սաղմ.98:3, Եսայի 49:6, 52:10
5. Փրկության Նրա պատգամը, Եսայի 48:20, 62:11
6. Մեսիական Թագավորի իշխանությունը, Սաղմ.2:7, Միքիա 5:4

Ինձ համար նմանատիպ միջազգային, բազմամշակութային, համընդհանուր շեշտադրությունը «միաստվածության» առանցքն ու պտուղն է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ):

AB (էջ՝ 365-366) չեղարկում է երկու ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԵՐԸ՝ դրանք դարձնելով ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ:

1. «հիշի՛ր» - BDB 269, KB 269 (սա վերաբերում էր Իսրայելին)
2. «տե՛ս» - BDB 906, KB 1157 (սա վերաբերում էր «երկրի բոլոր ծայրերին»)

Չնայած որ սա իմաստ ունի, այնուհանդերձ չի համապատասխանում ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԻ շարքին և Սաղմ.98:2 և 3-ի միջև առկա զուգահեռականությանը: ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ ավելի շատ կհամապատասխանեն հաջորդ պարբերությանը (Սաղմ.98:4-6):

❖ **«մեր Աստված»** Սա *Էլոհիմ* անունը՝ տիտղոսն է. տես՝ անունը՝ տիտղոսն է. տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Գ.

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 98:4-6
4Ցնծության աղմուկ բարձրացրե՛ք ՏԻՐՈՋԸ,
Ո՛վ ամբողջ երկիր.
Ձեր ձայները բարձրացրե՛ք, հրճվեցե՛ք ու փառաբանությունն՛ե՛ր երգեցեք:
5Օրհնությո՛ւն երգեցեք ՏԻՐՈՋԸ տավղով, քնարով ու սաղմոսների ձայնով,
6Փողերով ու շեփորների ձայնով,
Ցնծության աղաղա՛կ բարձրացրեք
ՏԻՐՈՋ առջև՝Թագավորի առջև:

98:4-6 Այս պարբերությունն ունի վեց ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, որոնք հորդորում են բոլոր մարդկանց փառաբանել Իսրայելի Աստծուն (տես՝ Սաղմ.98:3ա): Սա կարող է արտացոլել թագադրման արարողություն Երուսաղեմի տաճարում (տես՝ Սաղմ.47:5-9):

1. ցնծության աղմուկ բարձրացրե՛ք, Սաղմ. 98:4 – BDB 822, KB 1206, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. ձայներդ բարձրացրե՛ք, Սաղմ.98:4 – BDB 822, KB 953, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. հրճվեցե՛ք, Սաղմ.98:4 – BDB 943, KB 1247, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. փառաբանություններ երգեցե՛ք, Սաղմ.98:4 – BDB 274, KB 273, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. օրհնություն երգեցե՛ք, Սաղմ.98:5 – նույնը ինչ #4
6. ցնծության աղաղակ բարձրացրե՛ք, Սաղմ.98:6 – նույնը ինչ #1

Իսրայելը և ամբողջ երկիրը ցնծում էին և հռչակում ստեղծագործության և փրկության Աստծո հավատարմությունը, արդարադատությունը, սրբությունը, զորությունը և արդարությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ)

Սա այն աշխարհը չէ, որն Աստված նախատեսել էր ստեղծել: Սա այն աշխարհը չէ, որը մի օր լինելու է: Երբ ՆԿ-յան հավատացյալը բախվում է նմանատիպ տեքստի հետ, մի քանի հարցեր են առաջանում՝

1. Արդյո՞ք ՆԿ-ը Իսրայել ազգին տրված խոստումների մասին է:

ա. ո՛չ Հիսուսը, ո՛չ էլ որևէ առաքյալ երբևէ չեն պնդել կամ վերասահմանել Իսրայելին տրված ազգային խոստումներ
ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՆՉՈ՞Ի ԵՆ ՀԻՆ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԱՅԴՔԱՆ ՏԱՐԲԵՐ ՆՈՐ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻՑ
բ. մի ազգի տրված խոստումները ընդհանրացվել են ամբողջ մարդկության համար, որը հենց սկզբից էլ եղել է՝
1) Ծննդոց 1:26-27
2) Ծննդոց 3:15-ի նպատակը և ակնհայտ ենթատեքստը
3) տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2. Արդյո՞ք հազարամյան վերաբերում է Իսրայելին: Աստվածաբանների միջև շատ հակասական տեսակետներ կան՝
ա. Ուիլյամ Հենդրիկսեն, *Ավելի քան հաղթողներ*
բ. *Երեք տեսակետ հազարամյայի մասին և ավելին*
գ. *Չորս տեսակետ Հայտնության գրքի վերաբերյալ*

98:6 «շեփոր/եղջյուր» Սա *շոֆարն* է (BDB 1051): Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԾՎՈՂ ԵՂՋՅՈՒՐՆԵՐ, #2: Ձայնային և գործիքային երաժշտությունը միշտ էլ կազմել է Իսրայելի պաշտամունքի մի մասը: Ուշադրություն դարձրե՛ք Մարիամի և Մովսեսի երգերին՝ դեռևս նախքան տաճարի կառուցումը:

❖ **«Թագավորը, Տերը»** Ավելի ամբողջական քննարկման համար ՅԱՀՎԵՆ որպես «Թագավոր», տես՝ Սաղմ. 97:1 գրառումները:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ.

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 98:7-9
[7]Թող գոռա՛ն ծովն ու նրա լիությունը,
Աշխարհն ու նրա բնակիչները:
[8]Գետերը թող ծափ զարկեն *իրենց* ձեռքերով.
Ու բլուրները թող միասին ցնծա՛ն.
[9]ՏԻՐՈՋ առջև, քանի որ Նա գալիս է երկիրը դատելու:
Նա դատելու է աշխարհն արդարությամբ
Ու ժողովուրդներին՝ անաչառությամբ:

98:7-9 Վերջին պարբերությունն ունի երեք ՀԱՅՑԱԿԱՆ, որոնք արտահայտում են անձնավորված ստեղծագործության կարիքը (տես՝ Սաղմ. 104:19-22), ինչպես նաև ստեղծագործության արդար Դատավորին մարդկային փառաբանության անհրաժեշտությունը:

1. թող գոռան ծովերը – BDB 947, KB 1266, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ. 96:11. տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՋՐԵՐ
2. աշխարհն ու նրա բնակիչները (ակնարկում է զուգահեռականություն, սակայն չի սահմանվում)
3. թող գետերը ծափ զարկեն – BDB 561, K 567, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
4. թող բլուրները ցնծան – BDB 913, KB 1247, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ. 98:4բ, 89:12, Ես. 55:12

Թվոց 1 և 2 համազորներ են և մատնանշում են մարդկանց: Թվոց 3 և 4 համազորներ են և մատնանշում են ֆիզիկական ստեղծագործությունը:

98:8 Ուշադրություն դարձրե՛ք, որ այլ Սաղմոսներում սարերը հալչում են ՅԱՀՎԵԻ մոտենալուց (այսինքն՝ Սաղմ. 46:6, 97:5), սակայն այստեղ նրանք ցնծում են: Զգուշացե՛ք՝

1. Իմաստասիրական Գրականությունից յուրահատուկ վարդապետություն ստեղծելուց
2. միայն մեկ համարի կամ պոեզիայի միայն մեկ տողի հիման վրա տեքստային ապացույցով վարդապետություն ստեղծելուց:

98:9 «Նա գալիս է» Սա *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Երբ մտածում ենք ՅԱՀՎԵԻ «գալստյան» մասին, պետք է շեշտադրել մի քանի բան՝

1. Նա երբեք չի լքել: Նա միշտ այստեղ է
2. Նրա հատուկ գալուստը կամ ներկայությունը կարող է լինել՝
   ա. օրհնություն
   բ. դատաստան (ինչպես այստեղ, տես՝ Սաղմ. 9:7-8, 96:13)
3. Նրա գալուստը բերում է իր հետ նոր օրվա ակնկալիք (այսինքն՝ Եդեմում առկա փոխհարաբերության վերականգնումը)
4. Աստվածաբանական այս հասկացությունը լրացվում է Մեսիայի երկու գալուստներով՝
   ա. առաջինը իրականացումն է ՀԿ-ի կանխասումների մեծ մասի
   բ. երկրորդով ՅԱՀՎԵԻ իշխանությունը կհաստատվի

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ է «նոր երգի» բովանդակությունը:
2. Ի՞նչ հաղթանակի մասին է խոսում Սաղմ.98:1-ը:
3. Ինչպե՞ս է Սաղմ.98:3 կապված Ծննդոց 12-ի հետ:
4. Ի՞նչ կանոնավոր պաշտամունքային օրացույցի դեպքի հետ է կապված Սաղմ.98:4-6-ի նկարագրությունը:
5. Բացատրե՛ք, թե ի՞նչ տարբեր կերպերով կարելի է հասկանալ ՅԱՀՎԵԻ գալուստը: